



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ**

«16» ապրիլի 2019 թ.

№ 2/1596-Ա

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՔՍԱՅԻՆ ԾՍՈՒՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵԺԻՄ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 801-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասը և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 702-Լ որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 14-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Մաքսային մարմիններում, որպես աշխատանքային ռեժիմ, սահմանել հնգօրյա աշխատանքային շաբաթ, ժամը 9:00-18:00-ն, բացառությամբ սույն հրամանի 2-4-րդ կետերում նշված դեպքերի:

2. Սահմանել շաբաթվա բոլոր օրերին շուրջօրյա աշխատանքային ռեժիմ Հարավային մաքսատուն վարչության Մեղրիի, Հյուսիսային մաքսատուն-վարչության Բավրայի, Արևելյան մաքսատուն-վարչության Բագրատաշենի, Այրում-Ջիլիզայի,

Գոգավան-Պրիվոլնոյեի մաքսային կետ բաժինների, ինչպես նաև Արևմտյան մաքսատուն-վարչության Ուլևորների մաքսային հսկողության բաժնի և Բացթողնման բաժնի 2-րդ բաժանմունքի համար:

3. Արարատյան մաքսատուն-վարչության Գանձումների համակարգման և հաշվառման թիվ 2, Փաստաթղթային հսկողության թիվ 2 և Բացթողնման թիվ 2 բաժինների համար, որպես աշխատանքային ռեժիմ, սահմանել վեցօրյա աշխատանքային շաբաթ՝ ժամը 9:00-ից մինչև 18:00-ն:

4. Հյուսիսային մաքսատուն-վարչության «Շիրակ» օդանավակայանի մաքսային կետ-բաժնի համար սահմանել շաբաթվա բոլոր օրերին, ժամը 15:00-ից մինչև 24:00-ն տևողությամբ աշխատանքային ռեժիմ:

5. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018 թվականի դեկտեմբերի 28-ի «Մաքսային մարմինների համապատասխան ստորաբաժանումներում աշխատանքային ռեժիմ սահմանելու մասին» թիվ 801-Ա հրամանը:

6. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ՀՀ ՊԵԿ նախագահի 01.04.2019թ. թիվ 220-Ն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից:

 Recoverable Signature

X 

ՌԱՖԻԿ ՄԱՇԱԴՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Signed by: MASHADYAN RAFIK 3304710108

Ռ. ՄԱՇԱԴՅԱՆ

